

դերես օղու Սահակ, եւ թասվիրճի Սահակ Տէտէ: Գաղատիա մնացած էր միայն Չատրըճը օղու կարապետ վ., ան ալ վերջէն բռնուեցաւ, բանտարկուեցաւ, փախաւ Վենետիկ եւ հոն 1789ին վախճանեցաւ (Ա. գերեան 109—112:) Աքսորեալներն ամիսներ ետքը Պոլիս ղրկուեցան, ուր Պահաստուրեան եւ Մէհտէրեան վարդապետները վախճանեցան տառապանքէն. իսկ Ուժուտեան Եպիսկոպոս շում փախաւ (Չամչ. 826), 1766ին Վենետիկ էր (Հայ. Վենետ. 344), 1767ին շում Չեռնադրիչ կարգուեցաւ եւ 1774ին ի շում վախճանեցաւ եւ թաղուեցաւ Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցին:

Քանի ժամիս ետքը Յակոբ Պատրիարք իւր գասընկերները քովէն ցրուեց մէյակ տեղ Առաջնորդ դնելով ղիրենք, եւ Սարգսի ալ առաջարկեց որ ուզած աթոռն ընտրէ: Սարգիս յանձն չառաւ առաջնորդութիւն, սակայն տեսնելով որ Պատրիարքը Պոլսէն իր հեռանալը կ'ուզէ, Երուսաղէմի Ս. Յակոբայ վանաց նուիրակ եղաւ, եւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքին թղթովը՝ Զմիւռնիոյ վիճակին մէջ ժողովարարութեան ելաւ: Զմիւռնիա հասաւ 1742ին եւ իր բրեք տարի այն վիճակին մէջ շրջելով՝ տուրքերը ժողովեց բերաւ Կ. Պոլիս եւ յանձնեց Յակոբ Պատրիարքին, ի փոխարէն ընկալագրի: Յակոբ անմիջապէս դրամն Երուսաղէմ ղրկեց եւ 1744ին Գրիգոր Պատրիարքէն ընկալագիրն ընդունելով՝ Սարգսի յանձնեց հաստատական